# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

| | |
|---|---|
| *ՄԱՐԶԸ* | ԼՈՌԻ |
| *ՀԱՄԱՅՆՔԸ* | ԱԼԱՎԵՐԴԻ |
| *ԲՆԱԿԱՎԱՅՐԸ* | ԱԽԹԱԼԱ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱՅԱՎԱՅՐ (ԱԽԹԱԼԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ ԱՌՈՂՋԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ) |



# 1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Կիրակոս Գանձակեցին իր «Հայոց Պատմությունում» հիշատակում է, որ իշխան Իվանե Զաքարյանը մահացավ 1241 թվականին և նրա դին ամփոփվեց Պղնձահանքում, որն Իվանեն նախկինում խլել էր հայերից և դարձրել վրացական (այսինքն ուղղափառ) եկեղեցի: Խոսքը Ախթալայի եկեղեցու մասին է: Ըստ Գանձակեցու՝ նույն եկեղեցում է ամփոփված նաև Իվանե Ա-ի որդի, իշխան Ավագը (մահ. 1250 թ. Բջնիում):

Միջնադարում (X դար) է կառուցվել նաև Պղնձահանքի կամ Ախթալայի բերդը: Քաղաքում պահպանվել են նաև բազմաթիվ այլ պատմամշակութային հուշարձաններ. մասնավորապես Ախթալայի վանք, Սուրբ Երրորդություն (սուրբ Աստվածածին) վանքը (XIII դար), Առաքելոց (Սուրբ Գևորգ) և Այանես եկեղեցիները, Խաչվանք, Նահատակի վանք մատուռները և Սուրբ Հովհաննես մատուռ-խաչքարը:

Ախթալա բնակավայրը 1921թ. հուլիսի 20-ի «ՀՍԽՀ վարչական վերաբաժանումների» դեկրետով եղել է Լոռու գավառի Ալավերդի գավառամասի կազմում, 1930թ. սեպտեմբերի 9-ից՝ Ալավերդու վարչական շրջանի կազմում, որը կազմավորվել է Ալավերդու և Դսեղի գավառներից, 1969 թվից՝ Թումանյանի շրջանի կազմում: 1939թ. Ախթալան ունեցել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ, որի ավանային սովետին վարչատարածքային կարգով ենթարկվում էին (1971թ.) Ախթալայի առողջարանը, առողջարանին կից ավանը, Վերին Ախթալա գյուղը, Նեղոց գյուղը, Քարկոփ ավանը: 1995 թվից «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքով Ախթալա քաղաքատիպ ավանին տրվել է քաղաքի կարգավիճակ Լոռու մարզի կազմում: Այժմ Ախթալայի քաղաքային համայնքի կազմում են Ախթալա քաղաքը, Ախթալայի առողջարանը և դրան կից գյուղը:

Ախթալա քաղաքը Հայաստանի Հանրապետության գունավոր մետալուրգիայի կենտրոններից մեկն է: Հայկական լեռնաշխարհում գունավոր մետաղների ձուլումը հայտնի է եղել մ.թ.ա. III-II հազարամյակում (Մեծամոր), մշակվել են պղնձի, անագի, ոսկու հանքավայրեր (մ.թ.ա. IV-III դդ.): Պղնձի, ոսկու, բազմամետաղային հանքանյութերի մշակումը, երբեմն տևական ընդմիջումներով, շարունակվել է միջին դարերում և առավել բարձր զարգացման հասել XVIII դարի II կեսին, երբ 1763թ. Ախթալայի արծաթ-կապարի և 1770թ. Ալավերդու պղնձի հանքավայրերի բազայի վրա կառուցվեցին Ախթալայի արծաթ-կապարի և Ալավերդու, այնուհետև Շամլուղի պղնձաձուլական գործարանները:

1785. և 1795թթ. հանքն ավերվել է և փակվել: Հետագայում այն վերականգնել են հույն հանքափոր վարպետները, որոնք եկել էին Հերակլ II թագավորի օրոք, դեռևս 1760-ական թվականներին: 1887-1914թթ. հանքավայրը շահագործել են ֆրանսիացի ձեռնարկատերերը:

1905թ. դադարեցվել էր Ախթալայի արծաթ-կապարի հանքավայրի մշակումը պաշարների սպառման պատճառով:

1918-1920թթ. Հայաստանում գործող ձեռնարկությունների զգալի մասն ավերվել էր: Հեղկոմի 1921թ. հունվարի 11-ի դեկրետով երկրի հանքային արտադրությունն ու մետալուրգիական գործարանները ազգայնացվեցին: 1924թ. սկսեցին գործել Ալավերդու, Ղափանի պղնձաձուլական գործարանները, 1927 թվականին՝ Շամլուղի, Ալավերդու և Ղափանի հանքերը:

1960-1985թթ. ՀՍՍՀ գունավոր մետալուրգիան մեծ առաջընթաց ապրեց: 1967թ. շարք մտավ Ախթալայի հարստացման ֆաբրիկան:

1971-1975թթ. Շամլուղի պղնձի, Ախթալայի արծաթ-կապարի հանքերն ու հարստացուցիչ ֆաբրիկան ընդգրկվեցին Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի կազմի մեջ: Այժմ վերագործարկվել է Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկան:

## 2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ախթալա, քաղաք Հայաստանի Լոռու մարզում՝ Լալվար լեռան ստորոտում, Դեբեդի ձախ ափին: Մարզկենտրոնից գտնվում է 62 կմ հյուսիս-արևելք, բարձրությունը ծովի մակերևույթից 740 մ է: Բնակչությունը հիմնականում զբաղվում է հանքարդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ:

## 3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Կլիման մերձարևադարձային է ՝ չոր ամառներով և մեղմ ձմեռներով:

## 4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| 1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը | Թումանյան |
| 2. Բնակավայրի հեռավորությունը՝ | |
| 2.1) համայնքի կենտրոնից (կմ) | 23,0 |
| 2.2) մայրաքաղաքից (կմ) | 182,0 |
| 2.3) մարզկենտրոնից (կմ) | 62,0 |
| 2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ) | 10 |
| 2.5) նախկին շրջկենտրոնից (կմ) | 20,0 |
| 2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ) | 5,0 |
| 2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ) | 5,0 |
| 4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ) | 740,0 |
| 5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ.կմ/հա) | 18.89/1889.69 |
| 6.Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները | գ. Նեղոց, գ. Փոքր Այրում, Շամլուղ |
| 7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը | +374 98535449 |
| 8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը | Այո, 1 |
| 9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ) | Ոչ |
| 10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ) | Այո |

## 5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

| | **2025թ.** |
|---|---|
| 1. Մշտական բնակչության թվաքանակը | 1900 |
| 2. Գրանցված ծնունդների քանակը | 14 |
| 2.Մահացության դեպքերի քանակը | 28 |

| | |
|---|---|
| 3.Ամուսնությունների քանակը | 4 |
| 4. Ամուսնալուծությունների քանակը | 0 |
| 5. Տնային տնտեսությունների թիվը | 1027 |
| 6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը | 46 |
| 7. Կենսաթոշակառուների քանակը | 497 |
| 8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը | 96 |

## 6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | **01.01.2025թ.** |
|---|---|
| 1. Գրադարանների քանակը | 1 |
| 2. Արվեստի դպրոցների քանակը | 1 |
| 3. Երաժշտական դպրոցների քանակը | 0 |
| 4. Նախադպրոցական հիմնարկների քանակը | 2 |
| 5. Հանրակրթական դպրոցների քանակը | 2 |
| 6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը | 0 |
| 7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը | 0 |
| 8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը | 0 |
| 9. Մարզադպրոցների քանակը | 0 |

## 7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

| | **01.01.2025թ.** |
|---|---|
| 1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ$^2$) | 62 340 |
| 2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը | 43 |
| 3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը | 153 |

## 8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | **01.01.2025թ.** |
|---|---|
| 1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա) | 1434 |
| 2. Բնակավայրերի հողեր (հա) | 120,97 |
| 3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | 2 |

| | |
|---|---|
| 4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ | 3 |
| 5. Հատուկ նշանակության | 0 |
| 6. Հատուկ պահպանվող տարածքների | 11,91 |
| 7. Անտառային | 274,1 |
| 8. Ջրային | 12,14 |
| 9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը | 118 |
| 10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը | 19 |
| 11. Խոզերի գլուխաքանակը | 69 |
| 12. Գյուղատնտեսական տեխնիկա | 0 |
| 12.1 տրակտորներ (քանակը) | 0 |
| 12.2 կոմբայններ (քանակը) | 0 |
| 13. Գյուղացիական տնտեսությունների թիվը | 0 |

## 9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

| | |
|---|---|
| 1. Էլեկտրական ենթակայանների քանակը | 4 |
| 2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ) | Այո |
| 3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ) | Ոչ |
| 4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ) | Այո |
| 5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ) | 29 |
| 6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը | 2 |
| 6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը | 1 |
| 6.2 Էքսկավատորների քանակը | 1 |
| 6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը | 0 |
| 6.4 Գրեյդերների քանակը | 0 |
| 6.5 Աղբատար մեքենաների քանակը | 2 |
| 6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը | 0 |
| 6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը | 0 |
| 6.9 Ավտոաշտարակների քանակը | 0 |
| 7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ) | 1 |
| 8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը | Ոչ |
| 9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ) | այո |
| 10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ) | Ոչ |

## 10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

| | 01.01.2025թ. |
|---|---|
| 1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, որից՝ | 3 |
| 1.1 համայնքային ծառայողներ | 2 |
| 2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը | 0 |

## 11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

| Հիմնախնդիրը (նկարագրությունը) | Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները |
|---|---|
| Աշխատատեղերի բացակայություն | Նոր աշխատատեղերի ստեղծում |
| Էկոլոգիական խնդիրների առկայություն | Պոչամբարների ռեկուլտիվացիա, պոչանքների արտանետումների կառավարում |
| Սպորտդահլիճի և մշակույթի տան բացակայություն | Սպորտդահլիճի կառուցում, մշակույթի տան ձեռքբերում |
| | |
| | |